

ԳՐԱԽՍԱԿԱՆ—ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ

Ա.-ԴՕ. Վանի, Բիթլիսի եւ Էրզրումի վիլայէթները՝ ուսումնասիրութեան մի փորձ այդ երկրի աշխարհագրական, վիճակագրական, իրաւական եւ տնտեսական դրութեան, երեւան տպարան «Կուլտուրա» 1912 թ. Գինն է 1 ռ. 20 կոպ.

Հայկական տառերի գիւտի եւ հայ տպագրութեան կրկնակի յորելեանը Ա.-ԴՕ-ն արժանաւայել կերպով է շնորհաւորում, նուիրելով իւր աշխատութիւնը ազգային դարաւոր տօնին: Հայ մամուլը լուռ չմնաց այս աշխատութեան դիմաց եւ փոքրիկ, թեթեւեղ հիւանդիկներ երեւցին այս ու այն թերթերի մէջ. բայց դժբախտաբար լուրջ կերպով ոչ ոք կանգ չառաւ Ա.-ԴՕ-յի այս գործի վրայ*: Գրքի կարեւորութիւնը եւ այժմէութիւնը ի նկատի ունենալով մենք մի փոքր ընդարձակօրէն կաշխատենք նրա պարունակը եւ այդ պարունակի հետ կապուած հնարաւոր հետեւութիւններն ու ենթադրութիւնները լուսաբանել:

Ողջունում ենք Ա.-ԴՕ-յի գիրքը, որ Ասիական Թիւրքիայի Հայկական վեց վիլայէթներից ամենից հայաշատների՝ Վանի, Էրզրումի եւ Բիթլիսի աշխարհագրական, վիճակագրական իրաւական եւ տնտեսական ուսումնասիրութեան մի փորձ է: Մինչեւ այժմ Թիւրքիայի Հայկական նահանգների մասին մենք շատ ենք խօսել, բազմաթիւ ծրագրեր կազմել, այնտեղ գործելու եւ տեղական ազգաբնակչութեանն օգնելու որոշ եղանակներ մշակել, բազմազան ու բազմատեսակ վիճարանութիւններ սարքել, բազմաթիւ անգամ դասախօսութիւններ կազմակերպել — բայց այդ բոլորը առանց քիչ թէ չատ նախնական լուրջ ու հիմնովին պատրաստութեան, առանց Թիւրքիայի եւ նրա Հայկական նահանգների մօտաւոր ճանաչողութեան: Հայի համար դժուար էլ էր այդ ճանաչողութիւնը. դա կապուած էր մեծ ոխակի եւ անագին վտանգների հետ: Ֆէոդալական կարգերի, տեղ տեղ գերդաստանային փակ տնտեսութեան պայմանների մէջ նիւրճող երկրի մէջ ոչ միայն բացակայ էին հաղորդակցութեան ամենահասարակ ու անհրաժեշտ միջոցները, այլ եւ բառի իսկական իմաստով չկար անձի ազատութիւն, ճանապարհորդելու ապահովութիւն. եւ ամեն ոք, ով

* Այս յօդուածը տպագրութեան յանձնելուց յետոյ «Հորիզոն»-ի մէջ լոյս տեսան մի քանի լուրջ դիտողութիւններ:

տանից դուրս էր գալիս թէկուզ մի փոքրիկ պտոյտ անկու Ասիական թիւրքիայի նահանգներում, պէտք է գիտակցէր, որ անձը մշտական վտանգի մէջ է գտնուելու:

Դրութիւնը ըստ երևոյթին փոխուել է սկսւում 1908-ից յետոյ, երբ զինւորական տարրերը թիւրքիայում յեղափոխութիւն են առաջ բերում և սահմանադրութիւն հռչակում: Մի առժամանակ—յեղափոխական ոգևորութեան տակ անշուշտ, խստիւ արգելում են ապօրինի գործողութիւններն ու հպատակներին խոստացւում է անձնական ազատութիւնների հետ նաև ստացուածքի ապահովութիւն: Թիւրքիան ճանաչելու, այդ երկրի մէջ տիրող կարգերն ու պայմանները ուսումնասիրելու համար այդ արտաքին ապահովութիւնը անաշխարհ կարեւորութիւն ունեցող պայմաններից էր, որից և անմիջապէս օգտուել են սկսում զանազան մարդիկ: Այդ մարդկանցից մէկն է ահա և Ա.-Դօն: Նախանձելի եռանդով նա մի ճանապարհորդութիւն է ձեռնարկում 1909 թուի յունիս, յուլիս և օգոստոս ամիսների ընթացքում Վանի, Բիթլիսի և Էրզրումի նահանգներում երկրի ուսումնասիրութեան նպատակով և ահա այդ ճանապարհորդութեան արդիւնքը այսօր մեր առաջն է:

Առաջուց կասենք, որ շատ քչերն են այդքան կարճ ժամանակը այդպիսի եղանակով գործածել կարողացել, ինչպէս դա Ա.-Դօն-ին ընդհանուր առմամբ յաջողուել է. որովհետև հեղինակը տալիս է մեզ ակնարկուած երեք վիլայէթների մանրամասն, ամբողջական նկարագիրը հիմնուած իւր անձնական դիտողութիւնների, տեսածի ու ապրածի այլ և շատ ղէպերում կողմնակի, Հայկական իրականութեանը մօտ կանգնած մարդկանց հաղորդած տեղեկութիւնների վրայ: Այսպիսով կարող ենք ասել, որ Ա.-Դօն-ի գիրքը Հայաստանի մասին լոյս տեսած առաջին հայ գիրքն է, որ քիչ թէ շատ որոշ գաղափար է տալիս Ասիական թիւրքիայի Հայկական նահանգներից երեքի մասին:

Ա.-Դօն ցանկացել է, ինչպէս ասացինք, այդ երեք նահանգների ամբողջական նկարագիրը տալ: Այդ հանգամանքը նրա գրքի առաւելութիւններից են համարում շատերը: Ինչ կասկած, որ ամբողջութեան, ամփոփ, ինքն իւր մէջ մի անկախ ու ազատ մարմին կազմելու ձգտումը գերազոյն նպատակներից պէտք է լինի զրական երկի համար. բայց ոչ այս տիպի գրուածքների համար: Վիճակագրութիւնն ու նկարագրութիւնը այն էլ թիւրքիայի նման մի պետութեան մէջ ուղղակի անհնարին է, ինչպէս ինքը Ա.-Դօն էլ քաջ գիտակցում է և մի քանի անգամ շեշտում: Անշուշտ Ա.-Դօնի համար այդ կարճ ժամանակում անհնարին էր այցելել երեք վիլայէթ-

ներքի բոլոր քիչ թէ շատ նշանաւոր կենդանիները և եթէ նրան
այդ հնարաւոր է եղել, ապա պէտք է ընդունենք, որ նա շատ քիչ
յաճախ մի քանի ժամ կամ մի օր պէտք է մնացած լինի այդ
վայրերից մեծ մասի մէջ: Մենք չենք կարող ասել ի հարկէ, թէ
ինչու երկար կանգ չէ առել այս կամ այն վայրի մէջ, սակայն
Հայկական իրականութեան աւելի խոր ուսումնասիրութեան համար
անշուշտ աւելի դրական ու հաստատուն փաստեր երևան կը բերէր
Ա.-Դօն, եթէ որեւէ գաւառի կամ որեւէ սանջակի մէջ աւելի երկար
մնար ու դիտէր: Անշուշտ հեղինակը մեզ հետ լրացէս համաձայն
կըլինի, որ աւելի լաւ է դիցուք Վանի վիլայէթի հիմնական ծա-
նօթութիւն ունենալ, քան Վանի, Բիթլիսի և Էրզրումի հարևան-
ցի, արագօրէն դիտուած թէկուզ ամբողջական ու կոկ նկարա-
գիրը: Ա.-Դօյի գրքի մէջ կան գաւառամասերի նկարագրութիւն-
ներ, որոնք նրա ուշադրութիւնն աւելի երկար են իրանց վրայ
բեւեռել, իրանց աշխարհագրական դիրքի կամ պատմական նշա-
նակութեան պատճառով. և այդ գաւառամասերի նկարագիրը դուրս
է եկել աւելի ամբողջական, պատկերներն աւելի կենդանի են,
գոյներն աւելի խիտ ու բնական. ընթերցողն օրինակ Սասունի
գիւղականքերի և Սասունի բնութեան մասին շատ կենդանի, իւր
հետ խօսող և միանգամայն հեշտ հասկանալի գաղափար է կազ-
մում: Հեղինակին յաջողուել է մի քանի ընդհանուր գծերով Սա-
սունի բնութեան պատկերը տալ. մի բնութիւն, ուր շաւիղը
անընդհատ ելեէջներ է կատարում. տեղ տեղ նա ձգւում է կոկ
ժայռերի վրայով, ուր սոյթաքում է թէ մարդու ոտքը, թէ ձիու
պայառ. տեղ տեղ ձեր առաջ ցցւում են ժայռի բեկորներ, որոնց
վրայից պիտի մագլցել և կամ թռչել. երբեմն շաւիղը ձգւում է
ձիւնի մի երկարուկ շերտի տակով... Անցնում էք դժուարին
ելեէջը կէս ժամ, մէկ ժամ... բայց դուք դեռ ևս ձորի մէջն էք
գտնւում, որտեղից լսւում է ձորի խորխորատներում քարերին
զարկնող և աղմկող գետի որոտը, որտեղից Քէփինի բարձր լան-
ջերում երևում է քրդական փոքրիկ օրան... օգոստոսի 4-ն է,
բայց ըստ երևոյթին մի քանի օր առաջ միայն վերջացել է ձիւնը
այդտեղից և նոր միայն բացւում է ձնծաղիկը: Մանկութիւնից
ի վեր մեր ականջին հնչող երգերի և պատմուածքների տպաւո-
րութեան տակ կազմուած պատկերը Սասունի դիրքի և բնութեան
մասին—լի ու լի իւր արդարացումն է գտնում Ա.-Դօյի նկարա-
գրութեան մէջ: Դա մի բնութիւն է, ուր բոլոր ճանապարհները
քարոտ են ու վտանգաւոր, բոլոր քարերը ահաւոր ու կասկածելի.
վերելքները բազմաթիւ, անանցանելի ու վտանգաւոր. «ոտներդ
տեղ տեղ դնում էք ժայռի ճեղքերի մէջ. ձեռքերով կախ էք
ընկնում ժայռի մի այլ ճեղքից և մագլցում առաջ... երկիւղը

ձեզ կոխում է, գլխի պտոյտ է առաջ գալիս, մտածում էք յետ դառնալ, բայց չէ որ նոյնքան դժուար է վերադառնալը, որքան և առաջ գնալը, և վճռելով այլ ևս յետև անդուգին չնայել, շարունակում էք մագլցումը մինչև վերջ»:

Սասունի բնութեան հարազատ դաւակն է նրա բնակիչը, Սասունցի հայը. «Նա տոկուն է և քաջ, ճիշտ է, նա հասակով պարթև չէ, քաղաքական հալածանքները, բնութեան ժլատութիւնը և չարքաշ կեանքը դրոշմել են նրա դէմքի ու կազմուածքի վրայ իրանց կնիքը, բայց նրանից խլել չեն կարողացել նրա անվահերտուութիւնը, և նա այսօր էլ արհամարանքով է նայում տաճիկներին վրայ, սպասելով լաւագոյն օրերին»:

Այդ լեռնաշխարհում տղամարդուց յետ չի մնում նաև կինը: Բնական-նախնական կուլտուրային և փակ գերդաստանային տնտեսութեան յատուկ պայմաններին համապատասխան, կինն այստեղ երբէք չի քաշուում տղամարդուց, իր երեսը չի ծածկում օտարի առաջ, և ոչ միայն այդքան, այլ և սարեցուն յատուկ հարցասիրութեամբ նա դիմում է օտարին ու ով լինելն ու գալու պատճառն հարցնում: «Քրդական հագուստի տակ, կրակոտ աչքերով և սևացած դէմքով տալուրիկցի կնոջ համարձակ դիմումը ձեզ հրապոյր է ազդում: Տալուրիկցի կինն է, որ տղամարդուն հաւասար իշխում է այդ լեռներին, տալուրիկցի կինն է, որ նեղ բոլակներին իր ամուսնու անբաժան ընկերն է և օգնականը, նա է տան պահապանը, երբ ամուսինը բացակայ է: Տալուրիկցի կինը դեղիցիկ չէ և ոչ էլ պարթև, բայց նա աշխոյժ է կրակոտ և եռուն, նրա շարժումները կեանք են շնչում և ձեզ խորին պատկառանք ազդում»: Այդ ամբողջ նկարագրից ընթերցողին թւում է, թէ Սասունցի տղամարդն ու կինն ևս նրա բնութեան մի մի բեկորներն են. Սասունի քարափներում ոստոստացող այծամներից կամ նրա խոր անդունդների միջով փրփրան ջրերի ալիքներից—ամեն բան այստեղ պարզ է, շարժուն ու բնական:

Սարի զաւակների լեզուն ևս աչքի է ընկնում իւր խոշոր առանձնայատկութիւններով. «Շէնիկից ու Սէմալից սկսւում է Սասունցուն յատուկ խրթին և անհասկանալի բարբառը, որը հասկանալու համար կարիք է լինում թարգմանի դիմել, նրա արտասանութիւնը և շեշտը միանգամայն քրդերէն է և երբէք չի կարեւրելի հասկանալ, մանաւանդ երբ նա շատու է խօսում, բայց երբ ուշադրութեամբ հետևում էք նրա արտասանած բառերին, նոր համոզւում էք, որ շատ բառեր հայերէն են»: Սասունցու բարբառի մասին մօտաւոր գաղափար տալու համար հեղինակն անշուշտ աւելի լաւ կանէր մի երգ կամ մի փոքրիկ պատմուածք առաջ բերէր նրանց բարբառով: Այդ աւելի կարեւոր էր, քան Սասունի

շրջանում գործածւող մի քանի յատուկ անունների բացատրութիւնը:

Դա լեռնաշխարհի նկարագիրն է. այդտեղ ապրում են սարի զաւակները, որոնք պատրաստ են ամեն բոլոր թողնել իրանց ստացուածքը պահելու և հարստութիւնը ձեռքում թողնելու համար ստիպուած չեն աղաներին շողոքորթելու, որովհետեւ ամենաանհրաժեշտ իրերից և պիտոյքներից զատ սարեցին ուրիշ սեփականութիւն չունի: Այդպէս չէ դաշտեցին. և Ա-Դօն մեզ տալիս է տիպիկական դաշտեցու նկարագիրը յանձին մշեցի հայի: «Մուշի հայերը ըստ երևոյթին աւելի են ճնշումներ կրել, քան Տաճկաստանի այլ քաղաքների հայերը. այստեղ ստրկութիւնը, շողոքորթութիւնը և ուրիշի դէմ վիզ ծռելը ծայրայեղ չափերի է հասել. երիտասարդ ուժերը գլուխ են վերցնում և հեռանում այդտեղից. քաղաքում մնում են նրանք, որոնք կարողանում են աւելի շատ գլուխ ծռել, աւելի շատ կեղծել ու հաճոյանալ»:—Ինչ խօսք, որ այդ ծանր երևոյթը պէտք է անդրադառնար նաև Մշեցու ընտանեկան կեանքի վրայ: Սասունցի անվեհեր ու համարձակ, աղատ ու իւր ամուսնուն բոլոր գործերով ուղեկցող կնոջ նկարագրի դիմաց տեսէք Ա-Դօն ինչպէս է պատկերացնում Մշեցի կնոջը, որը կատարեալ մի հակապատկեր է վերևի պատկերին. «Մուշում հայ կինը շատ է իրաւագոյնը, փողոցում տղամարդ տեսնելիս նա երեսը դարձնում է դէպի պատը և այդպէս մնում է, մինչև որ տղամարդը կանցնի. տներում հիւրերի առաջ նա իրաւունք չունի դուրս գալու. եկեղեցիներում կանանց մասը տախտակներով միանգամայն զատուած է տղամարդկանց մասից, տախտակների մէջ թողնուած փոքրիկ ծակոտիները միայն հնարաւորութիւն են տալիս Մշեցի կնոջը նայելու բնմի վրայ կատարւող ծիսակատարութեանը»: Անշուշտ Մշեցի կնոջ՝ Կովկասում ապրող հայ ընկերակիներն ու քոյրերը ծանր խղճով ու անսահման ամսոսանքով կրկարգան Ա-Դօյի այդ տողերը և միանգամայն կըհասկանան հեղինակի հետեւեալ խօսքերը. «Այս քաղաքի սահմաններից դուրս գալով, կարծէք վայր գրինք մեր խղճի վրայ ծանրացած մի մեծ քար»:

Դժբախտաբար այսպիսի փոքրիկ գաւառամասերի ու առանձնայատուկ վայրերի ամբողջական, կոկ ու պարզ, բայց և պերճախօս նկարագիրներ քիչ ունի Ա-Դօն, և դա յատկապէս այն պատճառով, որովհետեւ, ինչպէս ասացինք, Ա-Դօն ցանկացել է երեք վիլայեթների նկարագիրը տալ, լինել աւելի սխեմատիկօրէն ամբողջ ու ամփոփ, քան հատուածական, սակայն կենդանի, պատկերաւուն ու պերճախօս: Որովհետեւ այսպիսի ճանապարհորդութիւնների մէջ յաճախ մի քանի առանձնայատուկ երևոյթների

կենդանի ու պարզ պատկերը մեզ շատ աւելի բան է ասում, քան այդ վայրերում զրուած բոլոր գիւղերի ու աւանների թէկուզ և ճիշտ ու անկասկածելի թուարկումը, վիճակագրութիւնը: Եւ ինչու համար է այդ ամբողջական թուարկումը, քանի որ միևնոյն է, ինչքան էլ Ա.-Դօն ասի ու հաւատացնի, թէ դա եղած թուականներն են և վիճակագրական հաշիւներից ամենից ճիշտն է,— հաւաստի լինելու հաւանականութիւնը, մեզ համոզելու ուժը չունին իրանց մէջ: Պարզ ենք ասում, փոխանակ երեք վիլայէթների բոլոր գիւղերի ու շէնների մանրամասն հաշիւն ու նկարագրութիւնը տալու, այդ վայրերի հանաչողութեան համար անհամեմատ աւելի կարեւոր էր որոշել, իրանց դիրքով, առանձնայատկութիւններով, կամ ափակական երեւոյթներով աչքի ընկնող վայրերի, տեսարանների ու բնակչութիւնների մանրամասն, կենդանի, պարզ ու հասարակ պատկերացումը, մօտաւորապէս Սասունի նկարագրի նման: Թուերով և յատուկ անուններով շատ հարուստ այս աշխատութեան մէջ համեմատաբար պակաս է կենցաղականը, հայի և նրա հարեանների ներքին կեանքի թէկուզ հարեանցի նկարագրութիւնը: Ահհնարին է ի հարկէ մի երկրից պահանջել այդքան բան, և թող ների մեզ յարգելի հեղինակը մեր պահանջկոտութեանը, դրա առիթներ շատ անգամ տալիս է մեզ ինքը հեղինակը՝ լոյս աշխարհ բերելով այսքան հետաքրքիր ու այժմէական մի գիրք, որի մէջ Հայաստանի իրական վիճակին քիչ ծանօթ ընթերցողը ազահութեամբ վրայ է պըծնում ու շատ հարցերի, շատ մութ մտապատկերների համար լոյս ու պայծառութիւն որոնում:

Բայց և այնպէս կան մի քանի կտորներ, որոնք վերաբերում են հայի ներքին, առտնին կամ գրսի, փողոցի կեանքի նկարագրին, և վերին աստիճանի հետաքրքիր պատկեր են տալիս մեզ Թիւրքիայի Ասիական նահանգներում՝ բուն իսկ Հայաստանում ապրող հայերի կուլտուրայի մասին: Այդպիսի նկարագրերից է օրինակ վերեւում առաջ բերած Սասունի և Մուշի նկարագրները, այլ և Էրզրումի գաւառի Ձիթող գիւղի, ինչպէս և Մուշի շուկայի նկարագրութիւնները: Վանը, Բիթլիսն ու Էրզրումը բնականաբար Ա.-Դօյի ուշադրութեանն աւելի երկար են արժանանում, իրեն նահանգական կենդրոններ և հայաշատ վայրեր:

* *

Ա.-Դօյի գիրքը՝ հիմնուած մեծ մասամբ իրական դիտողութիւնների վրայ—գալիս է մեզ մի փոքր աւելի պարզելու և գաղափար տալու այն գծովային իրականութեան մասին, որի մէջ դատապարտուած է հայը ապրելու այսքան երկար ու ձիգ դարեր: Ամբողջ գիրքը, ինչպէս «Հորիզոնի» մէջ պ. Ն. Ա.-ն նկատել էր,

աւերակների մի նկարագիր է կարծէք: Եւ իրօք սարսափեցնող, մարդու վրայ սարսուռ բերող մի շունչ է, որով դուք կարգում էք այդ գիրքը ու հեղինակի հետ այցելում երբեմն բուն Հայկական, և այժմ հայադատարկ վայրերը, կիսաքանդ, կիսաւեր շէնքերն ու աւանները, որոնց մէջ հողերը կան, տէրերը չկան, տները կան, բնակիչները չկան, եկեղեցիներ ու վանքերը կան—քրդերն են տէր դարձել: Մի իրականութիւն, որի մէջ սրբադործուած է աւերն ու թաւանը, կամայականութիւնն ու ապօրինութիւնը. որի մէջ ուրիշ խօսքով ապօրինութիւն չկայ, որովհետեւ չկայ օրինաւորութիւն: Դրախտանման երկիրը ապիկար ու անկարող թուրքերի ձեռքին աւերակների մի խղճալի կոյտ է դարձել. սէզ կատարներն ու գեղածիծաղ վայրերը, անտանելի մի հակադրութիւն են կազմում իրանց կեդտոտ, խաւար, անկուլտուր բնակիչների հետ: Մշոյ դաշտի բաւականին յաջող նկարագրի մէջ, թուելով դաշտի և նրա շրջապատի կախարդիչ գեղեցկութիւնները, Ա-Դօն բացականչում է. «Նայում էք բնութեան ստեղծած այդ գեղեցիկ տեսարանին. նրա հմայիչ պատկերներով յափշտակում էք այնքան ժամանակ, մինչև որ այդ երկրում տիրող կարգերի ախուր յիշողութիւնները գալիս են ընդհատելու այդ հմայիչ տպաւորութիւնները»:

Գրքի ընթերցանութիւնն ինձ վրայ այն տպաւորութիւնը թողեց, որ Թիւրքիայի Ասիական այդ երեք նահանգներում ամենատարրական կուլտուրան անգամ գոյութիւն չունի: Մի աշխարհ, ուր բացի ձիերից, եղներից ու ջորիներից, էշերի և ուղտերի քարաւաններից հազորդակցութեան այլ միջոցներ գոյութիւն չունին, չնայած, որ պետութիւնը բոլոր բնակիչներից վերցնում է ճանապարհներ շինելու համար յատուկ տուրք—«նօլ փարասի»: Կովկասահայր զարմանքով կըլսի, որ նոյնիսկ ամենանշանաւոր ճանապարհը, որ սկսուելով Տրապիզոնից անցնում է Բայրուրդի, Էրզրումի, Բասէնի, Ալաշկերտի և Բայազէտի տափարակներով և գնում դէպի հիւսիսային Պարսկաստան՝ դէպի Թաւրիզ—նոյնիսկ այդ կարեւոր ճանապարհը խւր ամբողջ երկարութեամբ անխալիս երթեւեկութեան համար անպէտ է: Լսել էինք, որ Հայաստանի գոնէ մեծ կենդրոններն իրար հետ խճուղիով են միանում, այժմ մեզ Ա-Դօն ասում է, որ թուրքական խճուղին աւելի զըժուարացնում է ճանապարհը, քան հեշտացնում. որովհետեւ մի քանի տեղերում միայն գոյութիւն ունեցող խճուղիների վրայ «աւազ չի լցուած և սխմիչ անխներով չի ամրացրած, այդ պատճառով երթևեկութիւնը կատարւում է ոչ թէ խճի վրայով, այլ խճի երկու կողմերով, արաբերի և ցանքերի միջով ձգւող ուղիով, որը անձրևների ժամանակ միանգամայն անանցանելի է դառ-

նույն»։ Կանոնաւոր ճանապարհներ չլինելով չկան նաեւ կամուրջներ գետերի վրայ. և ճանապարհորդները յաճախ մեծ պտոյտներ են գործում գետերի ծանծաղուտ տեղերով ելք գտնելու համար։ Իսկ գաւառների և առանձնապէս լեռնոտ շրջանների մէջ հազորդակցութիւնն ուղղակի հերոսական ճիգերի հետ է կապուած. այդ տեղերում յաճախ գրաստային երթևեկութիւնը փոխարինւում է բռնակիր մարդով։ Մենակ, անընկեր ճանապարհորդելը սարսափների ու մեծ վտանգների հետ է կապուած. մի քաղաքից դէպի միւսը գնալու համար պէտք է սպասել օրերով, երբեմն և շաբաթներով, մինչև որ ուղեկիցներ կը դառնան—Այս պայմաններում ճանապարհորդողը ծախսում է տասն անգամ աւելի դրամ և գործ է դնում տասն անգամ աւելի ժամանակ և աւելի եռանդ։ Այդ բոլորից յետոյ ինչ զարմանք, որ փոխանակութիւնը, միջերջների արագ ու ժամանակին փոխադրութիւնը, ինչպէս և փոքրիկ գաւառական ու նահանգական շուկաների կանոնաւոր, պարբերական կազմակերպութիւնը անհնարին բան է այս աշխարհում.

Համայնական նախաձեռնութիւնից զրկուած, ապիկար ու տնաքանդ պետութեան, այլ և բարբարոս քրդերի հրոսակաւմբերի մշտական վտանգի տակ ապրելու դատապարտուած հայերը քաջ են տալիս իրանց կեանքը այդ դժոխային պայմանների մէջ։ Մարդ պարմանում է, թէ ինչպէս մինչև այժմ չեն սպառուել վերջացել նրանք—այդ վայրերի բնիկ տէրերը։ Դժբախտաբար Ա.-Դօն—Իւր թուերով ու վիճակագրական աղիւսակներով գալիս է մեզ ասելու, որ դեռ մօտ անցեալում հայաշատ ու ճոխ աւանները այժմ դատարկուել են ու կիսաքանդուել. որ այժմ հայերը իրօք սոսկալի արագութեամբ նուազել են ու իրանց բուն երկրի շատ տեղերում աննշան քանակութիւն կազմում—համեմատած մահմեդական տարրերի հետ.

* * *

Հայ թերթերից մէկի՝ Լարծնի «Մշակի» մէջ մէկը Ա.-Դօնի վիճակագրական ուսումնասիրութիւնների արդիւնքը տեսնելով բացականչել էր. «Ա.-Դօնի գիրքը գալիս է սառ ջուր ածելու այն մարդկանց գլխին, որոնք հայերի թուերի մասին մեծ գաղափար ունէին»։ Ինքը Ա.-Դօն ամենից աւելի լաւ է գիտակցում անշուշտ թիւքիայում ուսումնասիրութիւններ անելու դժուարութիւնը, մանաւանդ երբ խնդիրը վերաբերում է ազգաբնակչութեան և յատկապէս հայերի թիւը որոշելուն։ Այս կէտում ընդհանուր նախապայմանների վրայ (երկրի ընդհանուր անկուլտուրականութիւնը, կանոնաւոր ու պարբերական համարումների բացակայութիւնը, մատնանների գործածութեան պակասը, անիրաւ ու կամայական

կառավարութիւն...) աւելանում են և յատուկ՝ սպեցիֆիկ դրութիւններ, որոնք հասկանալի են դառնում մեզ միայն այն ժամանակ, երբ հայի վիճակը մեզ պարզ լինի:

Պետութիւնն անշուշտ մեծ շահ ունի իմանալու իր հպատակներին քանակութիւնը, որովհետեւ հարկերից մեծ մասը ուղղակի ազգաբնակչութեան վրայ է դրւում: Թէ ինչ սոսկալի հարկային սխտեմ է տիրում Թիւրքիայում, թէ ինչքան ապօրինի, կամայական հարկեր կան ու թէ ինչպէս տասնապատիկ աւելի կամայականօրէն գանձւում են այդ հարկերը—այդ մասին Ա.-Դօն մեզ բաւականին ամփոփ դադափար է տալիս, երբ նա խօսում է «Հարկերի և նրանց գանձման սխտեմների մասին» (282—302 եր.): Հարկերի սոսկալի ծանրութեան տակ ճշուած ժողովուրդը իւր կայքի, հարստութեան հետ, թաղցնում է նաև մարդահամարի թիւը: Բացի դրանից, Թիւրքիայի հայը մի այլ հիմք ևս ունէր իւր թիւը ծածկելու. կառավարութիւնը մինչև 1908 թուականը՝ մինչև յեղափոխութիւնը փոխանակ զինւորի, քրիստոնեայ հպատակներից հարկ էր վերցնում, որ կոչւում էր զինւորական տուրք և որը դրւում էր ընտանիքի իւրաքանչիւր արու անդամի վրայ առանց բացառութեան հէնց ծնունելու օրից սկսած: Զինւորական տուրքը ամենածանր տուրքերից մէկն էր համարւում և բնական է, որ այստեղ ևս խեղճ ու թշուառ ժողովուրդը հնար փնտրէր դուրս գալու նեղ դրութիւնից. նա թաղցնում էր իր արու զաւակների թիւը. նորածին մանուկը տարիներով ու տասնեակ տարիներով չէր մտնում ոչ մի մատեանի մէջ, ուրեմն և հարկ չէր տալիս: Սրանք բոլորը հանգամանքներ են, որոնք չափազանց դժուարացնում են երկրի ազգաբնակչութեան մօտաւոր թիւն իմանալու*): Այս դժուարութիւնների դիմաց Ա.-Դօն իրաւամբ նկատում է, որ ճիշտ վիճակագրական տեղեկութիւններ ստանալն համարեա անկարելի է այդ աշխարհում:

Սակայն բացի պաշտօնական տեղեկութիւններից (որոնք միտումաւոր կերպով շատ անգամ փոխում են իրողութիւնը), բացի զանազան մատեաններից ու «գաւթար»-ներից կայ և Ա.-Դօյի համար մի այլ աղբիւր, որ նրան աւելի արժանահաւատ ու հաւատարիմ է թւում: Ամեն ինչից խուսափող և ամեն ինչի բացասաբար վերաբերող ժողովուրդը յաճախ բացում է իւր սիրարը, հաւատում է իւր գաղտնիքները այն մարդկանց, որոնց նա հա-

*) Թիւրքիայում ստատիստիկական տեղեկութիւնների անտանելի վիճակը շատ հանգամանօրէն պատմած է Լինչը. համեմատել *Армения, путевые очерки и этюды, переводъ съ англійскаго, Елизаветы Джунковской. Тифлисъ, 1910.* II հատոր զրուխ ԺԳ.

մարում է իւր բարեկամը, պատմելով նրանց իր ցաւերը և իր ունեցուածքը այնպէս, ինչպէս որ նրանք կան: Ահա այսպիսի վստահելի աղբիւրների վրայ են հիմնուած մեր բերած թուերը . որոնք, եթէ բոլորովին ճիշտ էլ չլինեն, յամենայն դէպս մօտ են ճշմարտութեանը: Եւ ահա իւր վստահելի աղբիւրների վրայ հիմնուած Ա.-Դօն յայտնում է, որ Վանի (103,000), Բիթլիսի (154,000) և Էրզրումի (160,000) վիլայէթների հայ ժողովրդի թիւը միասին անում է 417,000 մարդ:

Մենք ոչ մի հնարաւորութիւն չունինք ասելու, թէ ինչ աստիճան այդ թիւը համապատասխանում է իրականութեանը այդ անելու համար չունինք ձեռքի տակ ոչ մի յենակէտ. բայց ներքին հաւաստիութիւն ենք զգում a priori ասելու, որ այդ թուերը ճիշտ լինել չեն կարող: Եւ դա հէնց այն պարզ պատճառով, որ ինքը Ա.-Դօն չէր կարող իւր ձեռքի տակ եղած աղբիւրներին այդպէս հաւատ ընծայել: Նրա աղբիւրներից հէնց հեղինակի իրա ասելով առաջին տեղը բռնում են վստահելի մարդիկ, տեղեակ մարդիկ: Բայց ի՞նչ կարող է գիտենալ տեղեակ մարդը. նա հօշի կարող ամենայն մանրամասնութեամբ և հաւաստիութեան հաւասար աստիճանով թուել ձեզ Վան-Տոսպ գաւառի կամ Արճէշի, կամ Ալլաւազի, կամ Հայոց Ձորի բոլոր գիւղերի ազգաբնակչութիւնը. չէ՞ որ նրա այդ թուարկումն էլ հիմնուած կարող է լինել միայն ենթադրական չափումների ու հաւանականութիւնների վրայ: Երբ որեւէ մի փոքր գիւղի կամ աւանի բնակիչների թուի մասին է խօսք լինում, դեռ հեշտ է բանը. կարելի է անձամբ, մի քանի անգամ համարել մարդկանց. բայց երբ խօսքը վերաբերում է ամբողջ գաւառների և սանջակների, համարեա անկարելի է դառնում այդ նոյնիսկ տեղացի, տեղեակ մարդկանց համար: (Այդպիսի տեղեկութիւններից են բոլոր այն աղիւսակները, որոնք ղետեղուած են հետեւալ երեսներում 22, 27, 32, 35, 39, 43, 47, 50, 65, 69, 104, 173, 185...): Բացի տեղեակ մարդկանց տեղեկութիւններից, Ա.-Դօն օգտուել է նաև հոգևոր ատեանների տեղեկագրերից, վանքերի մատեաններից: Դժբախտաբար մենք հնարաւորութիւն չունենք ստուգելու, թէ ինչ աստիճան կարող են համապատասխանել այդ աղբիւրներից դուրս բերած թուերը բուն իրականութեանը: Էփրիկեանի բնաշխարհիկ և Մայիբի հանրագիտակ բառարաններն ևս ծառայել են Ա.-Դօն-յին որպէս հայ ազգաբնակչութեան վիճակագրութեան միջոց: Մենք զգում ենք Ա.-Դօնի վիճակը. հարկաւոր է իմանալ հայութեան համար առաջնակարգ նշանակութիւն ունեցող խնդիրը—հայերի թիւը. և ամենափոքր օժանդակութիւնը, լոյսի ամենանուազ նշոյլն անգամ կարող է առաջնորդ լինել այդպիսի դէպքերում. առաջնորդ այն համատարած

խաւարի մէջ, որին մարդ հանդիպում է Թիւրքիայի մէջ նման աշխատանքներ ձեռնարկելիս: Սակայն հաւատ ընծայել մեզ համար վերին աստիճանի կարեւոր խնդիրը լուծելու համար զանազան հանրագիտակ բառարանների (որոնց մէջ յատկապէս ստատիստիկական ամենակոպիտ մեղանշումները հարկւրներով սփռուած են և Թիւրքիայի համար անշուշտ կրկնապատկը կըլինի) — մենք չենք կարող և Ա.-Դօն էլ չպիտի անէր:

Մի այլ հանգամանք, որ նոյնպէս արժէ, որ աչքաթող չանենք: Ա.-Դօյի բերած աղիւսակներէց շատ շատերը Թիւ չունին. երբ, որ տարւայ վիճակագրութիւն է տրուում, յայտնի չէ: Անթուական աղիւսակներէց են Վան-Տոսպի, Արճակի, Բերկրի-Արաղայի, Արճէշի, Ալլաւազի, Հայոց Ջորի, Շատախի, Նոր-Դուզի և այլ բազմաթիւ գաւառների ազգաբնակչութեան վերաբերեալ տուած թուերը: Այդպէս է Աղթամարում եղած տեղեկագիրը, որից Ա.-Դօն քաղել է Գեւաւաշի, Կարճկանի, Մոկսի, Կառկառի, Խիզանի, Սպարկերտի, Մամուտանք... գաւառների հայ ազգաբնակչութեան թուերը: Նոյն վիճակի մէջ է նաև Մուշի առաջնորդարանի տեղեկագիրը, որից քաղուած են հետևեալ աղիւսակները — Մշոյ դաշտի, Բիթլիսի գաւառի, Խութ-Բոնաշէնի, Փսանայ գաւառի, Բուլանդլի, Վարդոյի գաւառների հայ ազգաբնակչութեան թուերը: Այդ հարցին մենք առանձին կարևորութիւն ենք տալիս, որովհետև դժուարանում ենք ընդունել, որ Մուշի առաջնորդարանը կամ Աղթամարի վանքը ամեն տարի կամ մի քանի տարին մի անգամ ընդհանուր վիճակագիր են անում իրանց թեմերի և կամ իւրաքանչիւր տարի իրանց մատեանների մէջ են կենդրոնացնում բոլոր դիւղերում եղած մատեանները. այն էլ հարց է, թէ արդեօք Թիւրքիայի այդ նահանգներում իւրաքանչիւր գիւղ ունի իւր ծխականների մատեանը, որ տեղից միայն ամենաճիշտ տեղեկութիւնը կարելի էր թերևս քաղել: Շատ է պատահում, որ Գ. Ճեմարան ընդունուելու համար Վանի, Բիթլիսի կամ Էրզրումի վիլայէթներից եկած հայ աշակերտը առանց որևէ ծննդական վկայականի է ներկայացել և յաճախ իրանց առաջնորդարանների կողմից վկայուած մի թուղթ է բերում — յետին թուով կազմուած: Դրանք հանգամանքներ են, որ պէտք է ուշադրութեան առնուեն, որովհետև մեծապէս ազդում են ազգաբնակչութեան թուի վրայ:

Այդ բոլորով հանգերձ մենք չենք կարող ասել, թէ հայ ժողովրդի Թիւը արդեօք Ա.-Դօյի բերածից մեծ է թէ փոքր: Մենք միայն արձանագրում ենք — որ նրա աղբիւրները չեն կարող վրատահելի լինել, ապա ուրեմն նրա բերած թուերը չեն կարող ճիշտ լինել:

Հայերի Թիւը որոշելու գործում շատ մեծ կարևորութիւն ունի

իմանալ հայի և քրդի, հայի և թուրքի թուական յարաբերութիւնը: Այստեղ խնդիրն աւելի ևս դժուարանում է. որովհետեւ, ինչպէս ճիշտ նկատում է Ա.-Դօն, այդ երկրում թափառական խաշնարած քուրդ ցեղերն համարեա անմատչելի են, չափուելու, ուսումնասիրուելու տեսակէտից անբոնելի: Բացի դրանից քրդերի և թուրքերի ճիշտ թիւը որոշելը դժուար է նաեւ մի այլ կողմից. շատ տեղերում, մասնաւորապէս քաղաքներում հնարաւոր չի լինում այդ երկու տարրերը միմեանցից տարբերել. և նրանց թուական յարաբերութիւնն իմանալ, թէև ընդհանուր առմամբ կարելի է ասել, որ քրդերը շատ են թուրքերից:

Մեզ մնում է մի հարց ևս շօշափել, որ մեր մամուլի ուշադրութիւնից դուրս է մնացել: Շատերը իրանց հիասթափուած զգացին հայերի թիւը Ա.-Դոյի բերած գրքում կարգալով: Այդ հիասթափութիւնն ենթադրել է տալիս, որ նրանք անշուշտ առաջ հիացած են եղել: Մենք, որ ոչ հիացած էինք, ապա ուրեմն ոչ էլ հիասթափուած ենք—մի զիտողութիւն ունենք այդ առթիւ: Վանի, Բիթլիսի, Էրզրումի վիլայէթների մէջ այս բոլորիս ապրող հայ ազգաբնակչութեան մէջ պէտք է հաշուել այն բոլոր հայերին, որոնք Համիդեան կառավարութեան օրով հետզհետէ հազարներով ու տասնեակ հազարներով գաղթում էին Ռուսաստան, Եւրոպա և յատկապէս Ամերիկա: Ոչ միայն գաղթողներին, այլ և նրանց աճումը, նրանց ընտանիքների թիւն ու ամբողջ սերունդները պէտք է աւելանան Հայաստանում այժմ ապրողների թուի վրայ: Մենք չգիտենք ինչքան կըլինի դրանց թիւը. բայց առաջուց կասենք, որ ի նկատի ունենալով մեր առանց այն էլ սակաւ թիւը արհամարհելի չէ յամենայն դէպս: Իսկ թէ մենք այդ տեսակ հաշուի համար ամենայն տեսակ հիմք ունինք, այդ վկայում է ինքը—Ա.-Դօն իր գրքի բազմաթիւ երեսներում (21, 34, 37, 38, 44, 49, 68, 62, 101, 145, 183, 213...)

Ա.-Դոյի գիրքը մի վերին աստիճանի ծանրակշիռ կողմ ևս ունի. նա մեզ կողմնակի, բայց ուժգին կերպով մատնացոյց է անում Հայկական հարցի միակ հնարաւոր և բանական լուծումը. երբ ի նկատի առնենք աւագակ քուրդ ցեղերի, վաշխառու կեղեքող թուրքերի, անկուլտուր ու կամայական կարգերի մէջ ապրող հայ ժողովրդի դարաւոր տառապանքը, այն ժամանակ կըհասկանանք Ա.-Դոյի ծանր թախիծով արտասանած հարցը.

«Ինչո՞ւ թշուառ տաճկահայը վիճակակից չէ եղել ոռոսահային»:
Այս յոյժ կարևոր հարցի առթիւ մի այլ անգամ:

Պետրոս Ալբուսեան